



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

Կ. Մանուկյանի  
Գույքի արժեքագրելը  
և  
Պ-թանկագր 1904թ

891.99

Փ-31

1875

13 APR 2011

1875

1875

1875

1875

1875



1875



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՐԹԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՐԹԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն

Дозв. ценз. 29 апрѣля 1904 года

## ԽԵԼՕՔ ԱՔԱՂԱՂ ՆԵՐ

### I.

Չըզիտեմ ինչպէս — և չըծիծաղէք, դա մի մեծ հարց է — կուպիտ, հաստափոր, կլանող ազան, ձեռք բերեց բազմաթիւ հաւեր ու արաղաղներ, մեծ բազի մէջը ցանկապատ քաշեց, հաւային խոշոր մի գաղուծ հիմնեց և բազմացնելով՝ շահագործում էր նրանց:

Մարդիկ լաւ զիտեն թէ հաւն ու արաղաղը ինչի են գործածում: Պահում են, բազմացնում, կերակրում — զիրացնում, ու մի գեղեցիկ օր մորթելով՝ խաշում են ուտում:

Սրանից սովորական բան:

Բայց մտէք մի քիչ էլ հաւի դրութեան մէջ: Երևակայեցէք, որ ձեր ընկերները հետ միասին հաւաքել — լցրել են ձեզ մի մեծ շրջափակում, ցանցա-

ւոր պատերով պարփակել, երբեմն միայն թող են տալիս վազվզել, խաղալ, — այն էլ միայն գիրացնելու մըտքով — և յետոյ, յանկարծ, ձեր աչքի առջև, գալիս բռնում են ձեզանից մէկին, ձեր մօրը կամ քրոջ, սիրելուն կամ ընկերին, քիչ հեռու, հէնց ձեր քթի տակ՝ գետնովն են տալիս, ոտները կապում, թևերը ծալում և փայլուն դանակը վզին շողացնում...

Եւ նա ճշում է, օգնութեան կանչում, քեզ է ձայն տալիս... Իսկ արիւնը շատըանի պէս դուրս է ցայտում նրա կտրւած վզից, գետինը կարմրացնում, և գլուխը մարմնից բաժանւած, շարժուն, յուսահատ արտեանուներով, փոշիների մէջ գլորելով՝ գալիս ընկնում է առաջդ. մինչ նրա սիրելի մարմինը տապալակում է իր արեան մէջ, ոստոստում, թփուտում, գալարում, կծկում...

Այդ բոլորը տեսնում ես դու բազի մէջ կանգնած, վշտից քարացած, վախից զոզալով, անկարող՝ նրան օգնելու, ճիշ արձակելու և գիտակից՝ որ մի օր էլ միւս սիրելուդ, քրոջդ, բա-

րեկամիդ են այդպէս անելու, քեզ իսկ մորթելու...

Ել ինչ սիրտ կոմսաը քեզ մօտ, ինչ բաղցը ըոպէ, ինչ սէր, զգացում — եթէ ոչ՝ միայն անէծք բնութեան դէմ, լուտանք ու կսկիծ, վիշտ բիւրեղացած, կիզիչ տառապանք:

Կարծում էք հաւը կամ աքաղաղը այդպէս չեն զգում: Իրաւ է, զուցէ լինին հաւեր — և շատ էլ կրկինին — որ, սերնդից սերունդ տեսած լինելով այդ բոլորը, վարժւել են մորթելն ու տանջանքը կեանքի մի պայմանը համարել և գոչէ, երբ հերթը գայ իրենց, գնան դանակի առաջ անմոռնչ, խոնարհ, հպատակ ճակատազրին:

Բայց ինչ... նայիր մէկ, երբ մորթողը դանակը ձեռքին, թևերը քշտած՝ մտնում է հաւերի մէջ. ո՞ր մէկը նրանցից՝ չէ ճշում կամ չէ խուսափում, ո՞ր մէկը յուսահատաբար չէ զարնւում կոճղերի, բարերի, սուր-սուր փշերի և ո՞ր մէկն արդեօք իր ազազակներով, ազելաբը ձայնով օղը չէ լեցնում. և երբ բռնւում է, երբ դանակը վզի կէտը կտրել է — ինչ կայ աւելի յուզիչ, ~~աւելի~~

լի ճնշիչ, քան նրա աղաղակը, լացն ու զանգատը...

Կարծում էք միւսները, որոնք այդքան անշարժ կանգնած են և աչքերը պայթելու չափ բացած, քարացած հայեացքով կծկւած նայում են—չեն զգում... մօտից նայեցէք. ինչպէս են դողում սարսափահար. իւրաքանչիւր փետուրն ու մազը, իւրաքանչիւր անգամն ու մասը դողում է արագ, սոսկալի կերպով և նրանց աչքերը չեն կարողանում հեռանալ մորթւողի տանջանքից, հոսող արիւնից:

Զգում են, գիտեն: Գիտեն, որ ազատելիք չունեն, որ իրենք ծնւում են ուտւելու համար: Բայց, ինչպէս մարդկանցից շատերը, նոյնպէս և հաւերը, ճակատագրական են համարում դա, անխուսափելի, բոլորովին բնական:

Եւ ծնւում են, մեծանում, ապրում ու մորթւում. մորթւելիս ճշում, աղաղակում, իսկ մինչև մորթւելը ոչ ոքի մտքովը չէ անցնում ազատւել, մի ճար մտածել:

Եւ ինչպէս անել, երբ վաղուց կորցրել են բարձր թռնելու ընդունա-

կութիւնը, երբ նրանց տէրը ունի միջոց ճնշելու, հուպ տալու, բանտարկել պահելու, իսկ իրենք, վաղուց—չգիտեմ երբ, որ ժամանակից—պաշտպանւելու ամեն ընդունակութիւնից զրկւել, դառել են ստրուկներ խղճալի մտքով, գծուծ զգացմունքով, վախկոտ սրտերով և ազատութեան ցանկութիւնը ընդ միշտ կորցնելով...

## II.

Բայց անա մի օր հեռաւոր երկիրներից մի տարօրինակ արագաղ յայտնւեց աղայի հաւային մեծ գաղութում:

Այդ այսպէս եղաւ:

Մի առաւօտ, երբ բոլոր հաւերն ու արագազները ազահարար կոցահարում էին բազի մէջ սփռւած հատիկները, յանկարծ լսեց թեւերի ուժգին թափահարութիւն և ցանկորմից ներս ընկաւ մի երկարահասակ թռչուն: Հաւերը ճշալով ետ փախան ու շրջան

կազմելով, հեռուից սկսեցին զիտել նորեկին, որ մէջ տեղ կանգնած, ուշադրութեամբ գննում էր բոլորին:

Կարմիր, փայլուն փետուրներով, երկար վզով և երկար ոտներով երիտասարդ աքաղաղ էր. այնպիսի խոշոր ճանկերով, որ աքաղաղները դողալով էին զիտում. սոսկալի էր մանաւանդ բութ մատի ժանիքը:

Հաւերն այլ ևս չէին համարձակուում մօտ գնալ հատիկներին. իսկ աքաղաղները մի վարկեան շփոթութիւնից յետոյ, սկսեցին կամաց կամաց առաջ քայլել:

Նորեկը գննում էր նրանց և նրա դէմքի վրայ գծուում էր խղճացող արտայայտութիւն: Բայց այդ երկար չքտեկց. յանկարծ լարեց նա ոտների վրայ, մի գորեղ կուկուրիկու արձակեց և այսպէս խօսեց.

— Բարև, բարեկամներ, չեմ եկել ձեր կուտը կամ կանայքը խլելու, մտաղիբ չեմ ձեզ հետ կուելու: Ինձ այստեղ բերողը այն միտքն է, որ ձեզ հետ բարեկամանամ: Վաղուց է որ իմ հայրենիքում, մեր մէջ, լսում ենք ձեր

տառապանքի. ձեր դերութեան և թըշուառութեան մասին մենք եղբայրներ ենք և ինձ դժար է տեսնել որ դուք այդ աստիճան ստրկացած, անմոռնչ՝ գոհ էք գնում անկուշտ աղային... Ես եկել եմ ձեր մէջ, ձեզ հետ խօսելու և պիտի տեսնէք, որ ինձնից ոչ մի վնաս չէք ստանալ. և եթէ լսէք ինձ, ձեզ կը պատմեմ շատ հետաքրքիր բաներ մեր այն հայրենիքի մասին, ուր ոչ շրջափակ կայ, ոչ աղա և ոչ էլ մորթող...

Այդ խօսքերը մի տեսակ ապշութեան մէջ ձգեցին բոլորին. աքաղաղները թշնամաբար էին նայում նրա վրայ. բայց նորեկը ոչ նրանց կուտին մօտեցաւ և ոչ էլ կանանց: Սկզբում ոչ որ չէր մօտենում նրան և այդ մի բանի օր տեկց: Բայց չորս օրից յետոյ նա բարեկամացաւ բոլորի հետ: Այնքան բարի էր, որքան որ գօրեղ էր: Հաւերը բոլորն սկսեցին սիրահարել նրա վրայ, իսկ աքաղաղները քծնախառն վախով էին մօտ գալիս նրան: Այդպէս է. ստրուկ մեծացածը առանց վախի՝ յարգանք չգիտէ. եթէ մէկին յարգում է— դա վախենալուց

է: 2է որ կան մարդիկ, որոնք պաշտում են ժայռեր, որովհետև վախենում են նրանցից. կենդանիներ, որովհետև սոսկում են նրանց յարձակումներից: Գրանից է որ ծնեւ է բժնութիւնը, շողոքորթութիւնը:

Սակայն հաւերը սկսեցին քիչ քիչ վախն էլ փարատել և այժմ պտտում էին նորեկի շուրջը: Նորեկը նրանցից ոչ ոքին չըզիպաւ և այդ զարմացրեց արաղաղներին:

Բանն այն է, որ նորեկը ոչ միայն ձեռք չէր տալիս կանանց, թողնում էր կուտը ուտելու, այլ մինչև իսկ ինքն էր հրաւիրում նրանց՝ մասնակցելու իր գտած որսին, և մեծ բաժինը նրանց էր թողնում:

Այդքան բարութիւն:

Ամբողջ գաղութը ապշութեան մէջ էր: Ո՞վ էր ուրեմն այդ վեհանձն ու զօրեղ նորեկը, որ ոչ բռնանում էր, ոչ օգտւում իր ոյժից, այլ մինչև իսկ որսում էր նրանց համար, պաշտպանում, խորհուրդներ տալիս. մի բանի անգամ էլ միայնակ կռիւ տուաւ

ուրուրի դէմ և արիւնաթաթախ անելով՝ քշեց նրան:

Ազան ի հարկէ տեսաւ նորեկին, զարմացաւ թէ ինչպէս էր ընկել նա իր գաղութի մէջ, բայց չհալածեց, այլ թողեց որ մնար և իր հպատակների մէջ լաւ ու զօրեղ սերունդ առաջացնէր:

Բայց նորեկի տարօրինակութիւնը այդ չէր միայն: Երբ գիշերւայ մութին բոլորը կծկւում էին թառի վրայ, նա նրանց պատմում էր հրաշալի բաներ օտար, անծանօթ, սիրուն աշխարհներից: Պատմում էր թէ որտեղից էր ինքը, թէ ինչ երկրի, ինչ ժողովրդի գաւակ էր և թէ ինչպէս կային հաւեր և արաղաղներ, որոնք ապրում էին առանց ցանկապատի, առանց ազայի և որոնց ոչ մորթում էին և ոչ էլ չարչարում:

— Այնտեղ հեռու, պատմեց նա մի երեկոյ էլ— շատ և շատ հեռու, կայ մի շքեղ երկիր, բարձրաբերձ լեռներ. շքեղ անտառներ, ուր ապրում են մեզ նման հաւեր ու արաղաղներ, անվանդակ, ազատ շրջավայրերում:

ծնում են նորա, մեռնում առանց մորթւելու և ուրիշների կերակուր դառնալու: Այդ երկիրը լեռների մէջ է, յափշտակիչներին անմատչելի...

Եւ ստրուկ հաւերն ու արաղաղները լսում էին նորեկին զմայլմամբ ու չէին հաւատում:

—Քաղցր է այնտեղի կեանքը— շարունակեց նա—առանց շրջափակի, առանց աղայի. ուտում ես՝ ինչ աշխատում ես. ծնում ես զաւակներ, տալիս ես նրանց ծծելու ազատ օդ, մեծանալու, բազմանալու: Ամեն ոք իր կեանքի տէրն է. ամբողջ բնութիւնը քոնն է, դու բնութեան մի մասը. ուրուրը չէ համարձակուում իջնել նրանց մէջ, ձագերը խլել, կանանց վախեցնել: Կոշտ—կոպիտ աղան այսպէս չէ գալիս դանակը ձեռքին, բռնում մորթոտում իւրաքանչիւրին:

—Իսկ ինչպէս գնալ այդ երկիրը. հարցրեց մի արաղաղ:

—Գրանից հեշտ բան չկայ, պատասխանեց նորեկը—ահա, տեսնո՞ւմ էք այդ գետակը. ես ձեզ կառաջնորդեմ. կրնկներք զրա ջրերի մէջ, հո-

սանքը մեզ կրտանի մի տեղ կըհասցնի և եթէ այն երկիրներին չենք հասնիլ, գոնէ ազատ կապրենք և շըրջափակից ու մորթւելուց հեռու կը լինենք:

—Իսկ եթէ խեղդուենք...

—Ի՞նչ կայ. չէ որ մի օր այստեղ անպատճառ պիտի մորթեն մեզ. աւելի լաւ չէ փորձել ազատելու և մեռնել ազատ. բայց գուցէ և հոսանքը մեզ տակովը չանէ, գուցէ մի ցամաք տեղ հասնենք. թո՞ղ լինի օտար տեղ, բայց հեռու այս գերութիւնից...

Ասաց, լուց և նայեց բոլորին:

Հաւերը—բոլորը լուռ էին. նրանցում զարթնում էր երագելու, լաւ օրեր ցանկալու ընդունակութիւնը: Իրաւ, ինչ լաւ կը լինէր գուրս գնալ հեռու, շատ հեռու, ազատ լինել, ազատ ապրել...

Ողջ գիշերը քնել չկարողացան. ջղային դրութեան մէջ էին. գետակին էին նայում, միմեանց հետ խորհում ու վիճում:

Բայց աղան գիշերը լսել էր նրանց

կշկշոցը, անհանգստութեամբ ելել էր զիտելու:

—Այս ինչ է. դարմանում էր նա — հաւերս անհանգիստ են. այդ օտար, վայրենի աքաղաղը փորձանք է բերելու գլխիս. ինչ որ շատ են ժողովում նրա շուրջը... չէ, վաղն և եթ նրան պիտի հեռացնել այտեղից:

Կուսագէտի մօտ օտար աքաղաղը յանկարծ վեր թռաւ, կուկուրիկու ձայնեց, հաւերին շուրջը ժողովեց և գոչեց.

— Գնանք ուրեմն, եղբայրներ. ժամանակ է, հետեցէք ինձ և ազատուենք գերութիւնից...

Ապա ոստնեց ցանկորմի վրայ, ցած նետեց իրեն, վազեց համարձակ, գետակը մտաւ, խրախուսեց հետեողներին, կանչեց և հոսանքի մէջ ընկաւ:

Մի քանի հաւեր և աքաղաղներ հետեցին նրան ու ջուրը մտան: Երկուսը, տեսնելով հոսանքի պտոյտը, ահաբեկ ետ դարձան. սէկր բարացաւ վախից և զանգնած մնաց ջրի եզերքին, մի ուրիշն էլ չկարողանալով

սրտապինդ մնալ—խեղդուեց. իսկ օտար աքաղաղն ու տասնի չափ գերիներից՝ քաջաբար տուին իրանց հոսանքի ընթացքին և շուտով անհետացան միւսների աչքերից...

### III.

Անցան շատ օրեր: Աղան գուշակեց բանն ինչու՞մն էր. բարկացաւ, կատաղեց, ցանկապատից դուրս եկող, բայց վարանողներին իսկոյն մորթոտեց, ուշադրութեամբ գննելով՝ կասկածաւորներին գաղութից գատեց՝ սպանեց, մի բանիսին էլ առանձին փակեց: Ապստամբութիւնը այդպիսով խեղդել մտածեց: Միւս կողմից էլ—մնացողների կուտը աւելացրեց և եթէ նրանցից մէկին մորթել էր կամենում, այլ ևս միւսների առաջ չէր գործում, այլ առանձին, որ տեսնողների մէջ յուզում չառաջացնէր:

Մի խօսքով, ամեն ջանք ի գործ

դրեց և օտար արագադի թողած ազգեցութիւնը ոչնչացնել աշխատեց:

Գաղութը քիչ—քիչ սկսեց հանդարտել այլ ևս վախժխելով և անկիւններում էին խօսում հաւերը օտար արագադի և նրա հետ խուսափած ընկերների մասին: Եղան շատերն էլ, որոնք հաստատում էին թէ ազատուողները անշուշտ խեղդուած կամ կորուած պիտի լինէին և կամ եթէ հասած լինէին որ և է տեղ, անօթութիւնից պիտի կորսուէին:

Բայց մի օր ահա թէ ինչ պատահեց: Երեկոյեան դէմ էր. գաղութն ամբողջ խումբ առ խումբ հաւաքուած՝ կուտ էր ուտում և զուարթօրէն խօսակցում, երբ օդի մէջ լսուեց մի շշուկ, յետոյ, յանկարծ երևաց մի մեծ ուրուր, համարձակ, առանց վարանելու անգամ՝ ցած սլացաւ, յափշտակեց մի գեր վառեկ և չնայելով հաւերի և արագադիների ճիչերին, նրանց վազվզելուն—կանգ առաւ մի թառի վրայ և հիգնօրէն սկսեց նայել նրանց:

— Հը՛, ի՛նչ է... ձայնեց նա սար-

սափած թռչուններին—վաղուց է որ ինձ չէիք տեսել, չէ. և կարծում էիք թէ այլ ևս ազատուել էիք իմ ձեռքից... Երեկ զարմացաք, որ յանդանցի ցած իջնել, ձեր որդիներից մէկին յափշտակել և այժմ էլ այստեղ, ձեր մէջ կանգնած՝ ծիծաղում եմ ձեզ վրայ: Ողորմելիներ: Միթէ կարծում էք որ չգիտեմ ինչեր են անցել այստեղ: 2է՛ որ այլ ևս չկան ոչ այն օտար քաջ արագադր և ոչ էլ ձեր՝ եթէ ոչ քաջ, գոնէ սրտոտ ընկերները...

Միամիտ եղէք, ես նրանց տեսայ և այդ էր պատճառը որ իջայ ձեզ հետ և այսուհետև ամեն օր կտեսնէք ինձ: Այսուհետև օրը մի վառեկ, իսկ երբեմն էլ, եթէ շատ քաղցած լինեմ, երկու վառեկ իմն է. ձեր աղան ձեզ լաւ է չաղացրել, որ լաւ էլ ուտի. ես ընկերանում եմ նրան վերջինի մէջ. միասին կուտենք ձեզ... անպարթէ մէկն ու մէկը սիրտ անէք ինձ վրայ յարձակուելու. հա՛, հա՛, հա՛—քրքջաց նա չարութեամբ — չէ՛ որ բոլորդ էլ ողորմելի վախկոտներ էք. այ՛, ինչպէս դողում էք. չէ՛ որ ձեր

1001  
4433

բաջերն ու այն օտար յանդուզնը այնտեղ հեռու են այժմ, ազատ և այլ ևս չէք տեսնիլ նրանց:

Այո, պարոններ, ես տեսայ. մի սքանչելի լեռան վրայ են, ազատ օդի մէջ բոյն են կազմել և ապրում են. ո՛չ ուրուր կարող է մօտ գնալ և ոչ էլ աղա. մինչ դուք, որ այդքան «խելօք» գտնուեցաք, այսուհետև երկու ուտող կունենաք.— ես և աղան... Դէհ, մնաք բարև, էլի խելօք եղէք, միշտ այդպէս խելօք...

Ասաց, մէկ էլ ծիծաղեց, բաց արաւ թևերը և սարսափից սառած գաղութի միջից բարձրանալով՝ հեռացաւ իր որսի հետ:

Նոյն գիշեր ոչ ոք չընեց. ոչ ոք կուտ չկերաւ. ամենքը խօսում էին ուրուրի պատմածների մասին. մի քանի արագաղներ ու հաւեր իսկոյն միացան և ողջ գիշեր դատելուց, մտածելուց ու վիճելուց յետոյ, միւս առաւօտ մօտ տաս հոգի դուրս ուտանցին և միւսների աչքերի առաջ ջրի մէջ ընկնելով՝ անհետացան...

Աղան սարսափած տեսաւ, որ

տաս հոգի էլ խուսափել էին:

— Անիծեալ օտար արագաղ. գոչեց նա: Եւ վճռեց մորթոտել կամ հեռացնել գաղութից բոլոր նրանց, որոնք բռնուելիս, կամ իր ներկայութեամբ՝ աւելի յանդուզն էին երևում:

Բայց թէ այդ սարսափի միջոցը և թէ ուրուրի ամենօրեայ այցելութիւնը փոխանակ մեռցնելու վտանգաւոր մտքերը, աւելի զրգուեց և քիչ օրից յետոյ հինգ հոգի ևս փախան:

Մնացածներն էլ զրգուում, խումբ առ խումբ հաւարում էին ամեն կողմ, յաճախ աղայի դէմ ցոյցեր անում և աղան ստիպւած էր ամեն անգամ մէկին կամ միւսին գատել, ոտները կապած հեռացնել գաղութից, մորթոտել, արսորել:

Այդ զրութիւնը աղային մշտատև մտատանջութեան պատճառ եղաւ այնուհետև: Ի՞նչ անել, օտար արագաղի թողած ազդեցութիւնը ինչպէս ոչնչացնել, արմատախիլ անել:

Եւ գիտէք ինչ արաւ:

Մի օր նրան այցի եկաւ հաւերի բնաւորութիւնը լաւ հասկացող մի ուրիշ աղա և երբ լսեց իր պաշտօնակցի գանգատը, ծիծաղեց և ասաց.

— Երևում է, ընկեր, որ հաւերին լաւ չես ճանաչում. իմ գաղութն էլ, չգիտեմ ինչպէս, ենթարկուեց վտանգաւոր մտքերի ազդեցութեանը, բայց ես շուտով կարողացայ առաջն անել... Հաւերդ կարդալ գիտեն:

— Կան գիտցողներ էլ:

— Չատ լաւ. բայց շատ չկարգան. յաճախ գրքերն են ներս բերում այդպիսի մտքեր... Նախ նրանցից, այդ քո հաւերից մի քանի ամենաազդեցիկներին և յանդուգներին շնորհիր առանձին արտօնութիւններ. օրինակ, պաշտօններ հիմնիր. մէկի վզից մի ժապաւէն կախիր, միւսի ոտքիցը բոժոժ, երրորդի կատարը ոսկեզօծիր... այս այսպէս: Յետոյ, նրանց վերակացու նշանակիր միւսների վրայ. ամենաազդեցիկին՝ ընդհանուր կառավարիչ, նրանից պակասներին՝ ոստի-

կաններ, աւելի պակաս ազդեցիկներին՝ տիտղոսներ շնորհիր, իսկ ամենաճարպիկներից հիմնիր մի գաղտնի, վերահսկող մասնախումբ և մի մոռանալ, այդ բոլորին էլ գանազան նշաններով պատւիր, որոշիր միւսներից ու մանաւանդ աւելի լաւ կերակրիր. եթէ տեսնես որ սկսեն յափշտակել հպատակներից՝ մատերի միջով նայիր, աչք խփիր...

Գու երևի ինձ հասկանում ես:

Աղան սքանչացումով սեղմեց իր ընկերոջ ձեռքը և միւս օրն և եթ գործադրեց նրա խորհուրդը: Պիտի ասել որ ճարպիկութեամբ ձեռնարկեց գործի:

Նախ, բռնուածներից ամենայանդուգնի վզից կապեց մի փայլուն, դոյնըզգոյն ժապաւէն, ոտերից էլ մի մի հնչեղ բոժոժ. յետոյ լաւ կուտ տուաւ, խոստացաւ միշտ այդպէս կերակրել և կառավարիչ կարգեց նրան միւսների վրայ:

Ապա սահմանեց աստիճանաւորներ՝ առանձին արտօնութիւններով և

այդպէս լիովին հետևեց ստացած խորհրդին:

Սկզբում ամբողջ գաղութը զարմացած էր. նոր պաշտօնեաները չէին հասկանում: Յետոյ, իշխելու, ընկերներից յարգանք ու հնազանդութիւն ստանալու փափազը գարթնեց նրանց մէջ և հուսկ ուրեմն, նրանք սկսեցին իրենց պահել բաշխող կուտի ամենալաւ մասը, պատժել ում կամենալ, սաստել, խլել ում փափագել և չէր անցել մի քանի ամիս, որ գաղութը ոչ միայն լիովին հանդարտուեց, այլ և ամենից ազատ ու յանդուգն մտածողները, դարձան ամենից բռնաւոր իշխողներ, գրողին տուին ազատ մտքերն ու իղէալները և մինչ իսկ սկսեցին ծաղրաբանութեամբ յիշատակել օտար արագողի և փախած ընկերների մասին...

Իրա վրայ աւելացրէր և այն, որ մի օր, աղայի հրամանով և նոր պաշտօնեաների համաձայնութեամբ, մի թուղթ կախուեց գաղութի մէջ, որի վրայ գրուած էր այսպէս.

«Չհամարձակուել ազատութեան վրայ մտածելու. այդպիսին միւսներից

աւելի շուտ կըմորթուի»...

—Չհամարձակուել...ճշացին պաշտօնեայ արագողները—[Թէ չէ՝ միւսներից աւելի շատ կըմորթուէք:

Եւ խելօք արագողները, երբ կարգացին այդ, բարւօք համարեցին աւելի ուշ մորթուելը՝ ազատութեան փոխարէն որպէս իղէալ ընդունել և այնուհետև, էլ ոչ ոք չհամարձակուեց ազատութեան մասին երագել...

Ա՛խ դուք խելօք, խելօք արագողներ...

## Դ Ր Ա Խ Տ

(Պարսկական գրոյց)

Կարմիր սարի ստորոտը, պարսկական մի քաղաքի մօտ, ապրում էր Աբդիւլ աղան: Երկրի տէրն էր նա:

Սատանան տւել էր նրան ամեն չարութիւն, Աստուծ վերցրել նրանից խիղճ ու բարութիւն: Աբդիւլ աղան հարուստ էր թագաւորի պէս: Նրա պալատը ամենագեղեցիկ շէնքն էր, նրան էին գովասանում զրգիչներ, նրան նայում բոլոր ակնարկներ:

Եւ եղաւ մի օր, որ հեռու—չընդստանից, Կարմիր լեռների մօտ եկաւ մի զէրւիշ, նստեց Աբդիւլի դռա-

նը, սպասեց բաժնին, խնդրեց տեսնել պալատի տիրոջ:

Աբդիւլ աղան երբ իմացաւ այդ—ծիծաղեց, հրամայեց ներս կանչել զէրւիշին և մտքումը զրեց նրան երգել տալով՝ զւարճանալ:

Եկաւ զէրւիշը, պատմեց Հնդստանի մասին, նկարագրեց Չահերի փառքը, երգեց աղօթքներ ու լաւ կտորներ:

Աբդիւլ աղան շատ զւարճացաւ, հրամայեց զէրւիշին կերակրել, յետոյ ասաց նրան.

—Դէրւիշ, դու երկրներ ես տեսել ու շատ ման եկել. առածն ասում է՝ «շատ ման եկողը կգիտենայ և ոչ՝ շատ ապրողը». անրի, բեզ պալատս ցոյց տամ և ունեցածներս... տեսնենք, կը հաւնես:

Եւ տարաւ նրան իր հետ: Յոյց տւաւ հայելապատ պատերով, գոյնզգոյն քարերով յատակած սրահներ, ցոյց տւաւ դիւանխանէն, առաջնորդեց հարեմը, ի տես հանեց կանանց, ապա գոմը տարաւ, հիացրեց նժոյգներով, մառանն իջեցրեց, ամբարը հանեց և

երբ դէրւիշը գտաւ որ այդ բոլորը ճոխ են, հարուստ, լիուլի—տարաւ նրան պարտէ՞՞ որ ցոյց տար աւագաններ, ծառն ու շատրւան, ծաղիկ — ծաղկանոց...

Դէրւիշը տեսաւ բոլորը, սառնութեամբ դիտեց պարտէզը, կանգ առաւ, մտածեց ու յետոյ ասաց.

—Արդիւ, որդիս, այս բոլորը լաւ են: Լիքն է ամբարներդ, հիւրի-փէրի են կանայք, շքեղ՝ պարտէզդ և պերճ՝ պալատդ... Այս բոլորի կէսը չունի հնդկական ո՛չ մի թագաւոր... բայց, ասա՛ ինձ, ի՛նչ են դրանք...

Ու ցոյց տուաւ պարտիզի ցանկապատից դուրս, ոչ—շատ հեռու գտնուող աւերակները:

—Ա՛հ, դրանք... ծիծաղեց Արդիւլը—ես քանդել տւի. մտադիր եմ պարտէզս լայնացնել:

—Իսկ ի՛նչ եղան միջի բնակիչները:

—Վռնդեցի. հողը իմն է. վռնդեցի նրանց հեռու:

—Եւ ո՛ւր գնացին:

—Չբարեբաղ:

—Իսկ ես այդ գիտեմ. ասաց դէրւիշը—երէկ անցնում էի մի գետի մօտից. խումբ խումբ թշուառներ քաղցից նւագած՝ խենթերի նման վրաս թափւեցին և խլեցին ամենավերջին կտոր հացը...

—Ա՛խ... ծիծաղեց Արդիւլը—ի՛նչ գողեր են եղել այդ ցնցոտիները...

Դէրւիշը նայեց նրան, նայեց լուռ, երկար, ապա տարաւ աղային պարտիզիցը դուրս, ցոյց տուաւ հեռում երևցող գիւղերն ու հարցրեց.

—Ք՞նն են դրանք:

—Իմն են:

—Անցայ այդ կողմերից... գիւղերի մէջ դեռ մնացել էին մի քանի կով ու ոչխարներ...

—Իրաւ... կանչեց Արդիւլը—իսկ նորա ինձ հարկ են պարտական. կասեմ վերակացուիս:

—Այո՛, ասաց դէրւիշը—ասա որ գիւղերի մէջ կար նաև մէկը, որ դեռ ունէր կրծելու մի կտոր սև հաց...

Յետոյ գնաց դէպի դուռը, մտածեց խորապէս, նայեց աղային ու աւելացրեց.

—Աբղիւլ, պալատդ ու պարտէզդ մեծ են, շատ հարուստ, բայց պակասում է ամենազլխաւորը՝ Այտեղ... (և նա ցոյց տւեց գիւղերը) դրախտ պետի շինել... և այն ժամանակ դո՛ւ կը լինիս միակը, որ կունենայ պալատ ու դրախտ...

Ասաց, օրհնեց, մի կտոր հաց միայն դրաւ տոպրակի մէջ, առանց ետ նայելու հեռացաւ պալատից և, Աբղիւլի երկրից:

Երկա՛ր մտածեց Աբղիւլը թէ ինչ էր ուզում ասել դէրւիշը: Մի՛թէ իսկապէս կարելի էր շինել դրախտը:

Ու հրամայեց կանչել ծերունի ծառային, պատմեց եղածը, պատուրեց շուտ ձի հեծնել, վազել դէրւիշի ետեից և հարցնել թէ «դրախտը» ինչպէս պէտք էր շինել:

Ծառան ձի հեծաւ, հասաւ դէրւիշին, յայտնեց Աբղիւլի հրամանն, իջաւ, սպասեց:

Դէրւիշը ժպտաց, ձեռքն առաւ գաւազանը, կանգնեց ծառայի առաջ և երգեց այսպէս.

«Որդի՛, անհայ սեղան չես տեսել,  
«Պանանց, մարդկանց, մանկան  
արցունք չես տեսեր»...

Ծառան խօսքերը միտը պահեց, ձի հեծաւ, դարձաւ, աղային պատմեց: Աբղիւլը զարմացաւ, ապա՝ ծիծաղեց.

—Խենթ է դէրւիշը. ասաց նա— ես արդէն մտածեցի և դրախտը կըշինեմ:

Ու նա ձեռնարկեց «դրախտը» շինելու:

Քանդել տաւ գիւղի բոլոր տները, վոնդեց ամէնքին, թողեց բաց օդում, ուր մեռնել սկսեցին անօթութիւնից: Խլեց հողերը, իսկ իրենց՝ մտրակների տակ՝ բերել տաւ, ձրի աշխատեցրեց և սկսեց մի մեծ, ընդարձակ պարտէզ կառուցանել, դրախտը կազմել...

Զինեց նրա մէջ պալատ, շատրւան, ծառուղի, ծաղկոց, տնկեց հազ-

լագիւտ բոյսեր, շինեց մեծ-մեծ հովանոցներ...

Իսկ ժողովուրդը լցւած պարտիզի շուրջը՝ մեռնում էր քաղցից և գոչում.  
— Հաց, հաց տւէր մեզ...

Անցան ամիսներ: «Երախտը» սկըսում էր վերջանալ: Ժողովրդի կէսը կորուել էր քաղցից, միւս կէսի ձայնն էլ կտրւել՝ «հաց, հաց» գոռալուց:

Վերջապէս մի գեղեցիկ օր Արդիւլը իր բարեկամներով ու կանանց հետ եկաւ մտնելու շինած դրախտը, ուր պատրաստւած կար խնջոյք ու հրրճւանք:

Եկաւ պարտիզի մօտ, հրամայեց մտրակելով հեռու մղել «հաց» ազադակողներին և ոտքը դրեց պարտէզի մէջ...

Եւ հազիւ թէ կամենում էր նա ներս մտնել, որ յանկարծ մթնեց երկինքը, սկսեց որոտալ, երկիրը շարժւեց, թանձր մշուշ իջաւ, ծածկւեց ամեն կողմ, լուեց որոտում, ազադակ, թնդիւն...

Ու ամեն ինչ խառնւեց միմեանց: Եւ երբ մշուշը ցրւեց, հողի հետ հաւասարւել էին Արդիւլի պալատն ու պարտէզ, շէնքն ու շինած դրախտ...

Ո՛չ մի հետք իսկ չէր մնացել բոլոր արիւնաշաղախ պերճութիւններից...

Մի ընդարձակ դաշտ միայն գոյացել էր նրա տեղը և դաշտը շրջապատել էր զարմացած թշւառ ամբոխը...

Անհետացել էին ու ջնջւել Արդիւլ ու կանայք, ծառայ ու համհարզ, թէ մեծ և թէ փոքր...

Ահա այդպէս էր Աստուած որ պատժեց Արդիւլին: Ժողովուրդը վարեց այդ հողը, ցանեց ու հերկեց, տուն շինեց և սկսեց խաղաղ ու հանգիստ ապրել՝ զերծ ազաներից:

Եւ երբ անցան օրեր, եկաւ նոյն դէրժիշը անցնելու այդ կողմերից:

Երբ տեսաւ ամեն ինչ, ժպտաց ու ասաց.

— Արդիւլը դրախտի փոխարէն դժոխք շինեց և նրա կրակի մէջ վառւեց ինքը. իսկ երբ մեռաւ, այն ժամանակ միայն գոյացաւ դրախտը:

Տաշեց մի տախտակ, տնկեց մի մեծ սիւն, տտխտակը գամեց վրան ու գրեց այնտեղ.

Դրախտը ոչ թէ Աբղիւլը շինեց  
 Որ ժողովրդին թշուապրեց,  
 Այլ Աստուած նրան կազմեց  
 Որ ամենջողներին Աբղիւլից ազտուեց.



Հայկ. մի մաթ. աշխ. անկից մեծ  
նիւն, անբարձրագի անկից կրտսն ու ան  
սխալով

Կարգաւոր իմ կողմէն  
Եւ Երանոսի իմ կողմէն  
Եւ Երանոսի կողմէն  
Եւ Երանոսի կողմէն

1880 թ.

Երանոսի կողմէն

1881 թ.

Երանոսի կողմէն

1882 թ.

Երանոսի կողմէն

« Ազգային գրադարան



NL0363737

59.994